

Հոն՝ տեղւոյն հապէշ պետին — որուն վէզիր տխտղոսը կու տայ Յովհաննէս Թիւթիւնճի — միջնորդութեամբ հրաման կ'ստանայ Հապէշիստանի թագաւորին երկիրը մտնելու (տող 32-34):

Այս հրամանին համաձայն առաջանալով Դիւարպատէն, 30 օրուան ճամբորդութենէ մը յետոյ կը հասնի Դումպիա, այն ատենուան մայրաքաղաքը Եթովպիոյ, որ հաւանօրէն Dembia քաղաքն է՝ Ձանալիճին մօտ:

Ագոնցի ժամանակ, այսինքն ԺԼ. դարու վերջերը եւս դեռ Տէմպիա նահանգը գլխաւոր կեդրոնավայրն էր հապէշ երկիրին: Ինչպէս կ'երեւի՝ Յովհաննէս Թիւթիւնճիի ժամանակ մայրաքաղաքը կը պահէր դեռ իր անունը, որ յետոյ փոխուած է Կեօնեհի: Ագոնց կ'ըսէ, թէ գլխաւոր քաղաքն է համօրէն հապէշ երկիրին և աթոռ՝ անոր ինքնակալին, զոր Հապէշները իրենք կը կոչեն Կեօնեհ ափալմայ, այսինքն «կնիքի քաղաք»:

Քաղաքը քիչ հեռու է Տէմպիա ծովակէն, տափարակ դաշտի վրայ, ընդմէջ Կանետայի և Եփրատայի: Քաղաքի շրջապատը 9 կամ 12 մղոնի չափ էր և թէպէտ նշանաւոր՝ այդ երկիրին համար, բայց մեր քաղաքներուն հետ բաղդատելով անշուք գիւղ մըն է: Քիչ շատ վայելուէչ շէնքեր սակաւ են, զի սովորական տուները գրեթէ ամբողջ ձագարածե են, խեղճ և անարուեստ:

Ունէր 100 եկեղեցի, որոնց գլխաւորը մայրեկեղեցին էր, ուր կը նստէր պատրիարքը: Այս քաղաքին շէնքերուն մէջ երեւելի է արքունի պալատը, կառուցուած՝ քաղաքին մէջ վայելուէչ դիրքի մը վրայ: Տարածութիւնը 3 մղոնի մօտ է, շրջապատուած բարձր պատով և զարդարուած բուրգերով ու աշտարակ-